Հաստատված է 30.08.2022թ

Տնօրեն՝ Ի.Խաչատրյան

Digitally signed by KHACHATRYAN IRINA 7201800132
Date: 2023.03.24 12:12:00 AMT

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ << ՄԵՂՐԱՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

ԴԱԿ՝ Ա.ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

Դաստիարակչական աշխատանքների պլանավորում
1. Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում

Դաստիարակությունը հանրակրթության կարևորագույն բաղադրիչներից մեկն է և հենց դպրոցին և ուսուցչին է բաժին ընկնում դաստիարակչական գործընթացի զգալի բաժինը: Դաստիարակչական համակարգի նպատակն է՝

- *• օգնել երեխային արդյունավետ կերպով հարմարվել աշխարհում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին,*
- *• բարեխիղճ և համարժեք կերպով արձագանքել շրջապատում տեղի ունեցող երևույթներին,*
- *• նպատակաուղղել երեխայի արժեքային համակարգի ձևավորումը,*
- *• զարգացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը,*
- *• աշակերտի մոտ ձևավորել հարգալից վերաբերմունք լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրող,*
- *• յուրաքանչյուր անհատի մոտ ստեղծել ինքնակատարելագործման ներքին պահանջ:*

Վերոնշյալ խնդիրները նպատակ են հետապնդում դպրոցում ստեղծել հնարավորինս միասնական դաստիարակչական միջավայր: Դպրոցի դաստիարակչական միջավայրը ներառում է՝

- *• դպրոցի անձնակազմը,*
- *• դասարանական անձնակազմը*
- *• աշակերտների ինքնավարությունը,*
- *• դպրոցի ավանդույթները:*

Մեր կարծիքով դպրոցում դաստիարակչական համակարգի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

- *• դաստիարակչական գործընթացներում առաջնորդվել միասնական սկզբունքներով և կանոններով, միասնական մանկավարժական պահանջներով,*
- *• ծնողներին ակտիվորեն ընդգրկել դպրոցի դաստիարակչական գործընթացներում,*
- *• ապահովել, որպեսզի դաստիարակչական աշխատանքները հիմնվեն հստակ նախագծված դասղեկական պլանների վրա,*
- *• մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել դպրոցի դաստիարակչական միջավայրը և բացահայտելով առկա խնդիրները և բացթողումները՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ,*
- *• ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ աշակերտների միջև, ինչպես նաև աշակերտների և ուսուցիչների միջև բավարար համագործակցություն, ինչպես նաև միմյանց հետ հաղորդակցվելու համար դրական միջավայր ստեղծելու ուղղությամբ,*
- *• յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ ցուցաբերել անհատական մանկավարժական աջակցություն, ինչպես նաև հատուկ մանկավարժական միջոցառումներ կազմակերպել դժվար դաստիարակվող երեխաների հետ,*

- • դասղեկական ժամերի և արտադասարանական միջոցառումների միջոցով իրականացնել բարոյական և հայրենասիրական դաստիարակության ծրագրեր,
- • ընդլայնել ինչպես դասարանների, այնպես էլ առանձին աշակերտների ներդպրոցական և արտադպրոցական դաստիարակչական բնույթի միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները,
- • մշտապես կարևորել ինքնադաստիարակությունը. աշխատանքները կազմակերպել այնպես, որպեսզի աշակերտների մոտ ինքնուրույն վերափոխվելու ցանկություն արթնանա,
- • դպրոցում ստեղծել <<Ծնողական համալսարան>> և դրանում ընդգրկել դասղեկների, հոգեբանների, մանկավարժական գիտության տարբեր մասնագետների: Անհրաժեշտ է նաև պարբերաբար վերլուծել այդ համալսարանում հավաքագրված դաստիարակչական բնույթի խնդիրները, որոնք առնչվում են ծնողների կողմից այս ուղղությամբ բավարար գիտելիքներ, կարողություններ և հմտություններ տրամադրելուն և նպատակ ունեն օգնել վերջիններիս,
- • համագործակցել իրավապահ մարմինների հետ:

2. Հայրենասիրական դաստիարակություն

Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջանն է անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն արմատավորելու և որպես հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար: Այս հարցն էլ ավելի սուր է ներկայանում մեր օրերում, քանզի այսօր ակներև է ավանդական հայրենասիրական գիտակցության մակարդակի նվազումը:

Հայրենիքը միայն հողն ու ջուրը չի, որ արժանի է և ենթակա պաշտպանության նրա զավակների կողմից: Հայրենիքը նաև մի մեծ տուն է, ընտանիք, որի հետ մարդը պետք է աշխատի և որին պետք է ծաղկեցնի, ղեկավարի և դարձնի բարեկեցիկ և արժանավայել ապրելու տեղ: Հայրենիքը պիտի լինի այն վայրը, որտեղ ապրելը յուրաքանչյուր անձի համար պատիվ լինի:

Զարգացման ծրագրի այս հատվածում արտացոլված միջոցառումները նպատակաուղղված են՝

- • սովորողների մոտ կատարելագործելու իրենց աշխատանքի, ազգի, նրա ավանդույթների և հաղթանակների նկատմամբ հարգանքը և հպարտության զգացմունքը,
- • նպաստել հոգեպես հարուստ և սոցիալապես ակտիվ կեցվածքով հայ քաղաքացու ձևավորմանը,
- • սովորողների կողմից կրճատել տարբեր օրինախախտումների և նրանց մոտ առկա վնասակար սովորույթների մակարդակը,
- • պահպանել և տարածել ՀՀ պետական խորհրդանիշերի (զինանշան, դրոշ, օրհներգ) բովանդակությունն ու նշանակությունը՝ սկսելով այս գործընթացը տարրական դպրոցից. դպրոցի յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա օրհներգը,
- • բարձրացնելու աշակերտների՝ ազգային շահերի պաշտպանության ձևավորմանն նպատակաուղղված ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ միաժամանակ սերմանելով հանրուրժողական և հարգալից վերաբերմունք այլ ազգերի նկատմամբ,
- • նպաստել հայության ինքնության ամրապնդմանը նպաստող գործողությունների իրականացմանը,

- • յուրաքանչյուր սովորողի մոտ արմատավորել սեփական ազգի պատմության ու պետության կայացման գործում իր մասնակցության կարևորությունն ու դրա իրական հնարավորությունը՝ <<Ինձնից է կախված իմ ազգի և պետության ապագան>> կարգախոսի արմատավորում,
- • դպրոցում հայրենասիրական դաստիարակության համակարգի կայացմանը, դրա արդյունավետ գործունեությանն ու մշտական կատարելագործմանը:

Հայրենասիրական դաստիարակության բնագավառում թվարկված ուղենիշային նպատակներին հասնելու համար մեր կարծիքով անհրաժեշտ է՝

- • դպրոցի վարչական և ուսուցչական անձնակազմին ակտիվորեն ընդգրկել սովորողների հայրենասիրական դաստիարակության ծավալման և կատարելագործման գործընթացներում,
- • պարբերաբար մոնիթորինգի ենթարկել, վերլուծել և գնահատել ծրագրավորված հայրենասիրական միջոցառումների կատարման արդյունավետությունը,
- • դպրոցական բոլոր հիմնական միջոցառումներն իրականացնելիս ապահովել հայկական խորհրդանիշների և հայրենասիրական գաղափարների գործածումը,
- • ամփոփել և տարածել հայրենասիրական դաստիարակության ասպարեզում լավագույն մասնագետների առաջավոր մանկավարժական փորձը,
- • ուսուցիչների և դպրոցի ղեկավարության կողմից մշտապես և հետևողական կերպով միջոցառումներ ձեռնարկել աշակերտական միջավայրում լայն տարածում ստացած անտարբերության, էգոիզմի, ցինիզմի և չարության դեմ,
- • հայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներդնել աշխատանքի նոր ձևեր և մեթոդներ, ինչպիսիք են զանգվածային լրատվության միջոցները և ժամանակակից տեխնոլոգիաները՝ ֆիլմեր, դիսկեր, ինտերնետային կայքեր և այլն,
- • դպրոցի աշակերտական խորհրդին ընդգրկել ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումներում,
- • հաճախակի անցկացնել ռազմական հայրենասիրական բնույթի մրցույթներ, հանդիպումներ, զրույցներ և այլ միջոցառումներ, ինչպիսիք են՝
  - • «Հայոց պատմություն», «Հայ ազգ», «Հայոց լեզու», «Հայ ընտանիք» թեմաներով հանդիպումները, զրույցները, սեմինարները և այլ միջոցառումները,
  - • հայտնի մարդկանց, զինվորների, հայ ազատամարտիկների, պատերազմի հաշմանդամների հետ հանդիպումները,
  - • դպրոցի հարևանությամբ գտնվող զինվորական հոսպիտալի հետ համագործակցության ձևավորումը և ըստ այդմ՝ միջոցառումների կազմակերպումը:
- • անընդհատ հարստացնել և համալրել հայրենասիրական դաստիարակության կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ մանկավարժական տեղեկատվական բանկը:

3. Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավումը

Դաստիարակությունը հաջողությամբ է պսակվում, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքը և երեխայի դաստիարակությունը կատարվում են միաժամանակ: Այսօրվա պայմաններում առանց ընտանիքի հետ ձևավորված համագործակցության առկայության հնարավոր չէ արդյունավետ կերպով կազմակերպել սովորողների հետ աշխատանքը:

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավումը նպատակ ունի՝

- • էլ ավելի արդյունավետ դարձնել ընտանիք-դպրոց փոխազդեցության համակարգը՝
- • բարձրացնելով փոխադարձ վստահության մակարդակը,
- • բարձրացնել աշակերտների ուսուցման արդյունքների համար ծնողների պատասխանատվությունը,
- • ծնողներին ավելի ակտիվորեն ներգրավել դպրոցի գործունեության մեջ,
- • նպաստել ծնողների և ուսուցիչների խմբային աշխատանքի արդյունավետությանը:

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավման համար անհրաժեշտ է՝

- • դպրոցի և ծնողների համագործակցության բովանդակության մեջ ներառել երեք հիմնական ուղղություններ՝
  - • ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածության բարձրացում,
  - • ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում,
  - • դպրոցի կառավարման գործընթացներում ծնողների մասնակցության մեծացում:
- • հանձնարարել դասղեկներին, որպեսզի վերջիններս անվերապահորեն ծանոթ լինեն աշակերտների ընտանիքների հետ, որտեղ փաստացի բացակայում է ընտանեկան դաստիարակությունը և տեղեկացված լինեն այն սովորողների մասին, որոնց ծնողները միայնակ են, հաշմանդամ կամ գործազուրկ, զոհվել են կամ որոնց ընտանիքները նյութապես անապահով են և ունեն կյանքի անբավարար պայմաններ,
- • կատարելագործել ծնողների հետ աշխատանքի ավանդական դարձած մեխանիզմները և պարբերաբար՝
  - • կազմակերպել ծնողական ժողովներ և անհատական զրույցներ,
  - • ապահովել առարկայական ուսուցիչների և հոգեբանների կամ այլ համապատասխան մասնագետների կողմից խորհրդատվության տրամադրումը,
  - • ապահովել դասարանական և ծնողական խորհուրդների ակտիվ գործունեությունը:
- • ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ պարբերաբար անցկացնել միջոցառումներ,
- • ոգևորել և խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողների անհատական նախաձեռնությունները, գիտագործնական խորհրդատվությունը, համատեղ ստեղծագործական գործունեությունը,
- • ըստ անհրաժեշտության՝ <<Ծնողական համալսարանում>> ծնողների համար անցկացնել անհատական և խմբային խորհրդատվություններ,
- • դպրոցի ծնողական խորհրդում ներգրավել դպրոցի ամենաակտիվ և փորձառու ծնողներին,
- • ամրապնդել ծնողական խորհրդի կապը աշակերտական, մանկավարժական և կառավարման խորհուրդների հետ:

4. Աշխատանք մանկավարժական համակազմի հետ

Մեծ է ուսուցչի դերը դպրոցում և այն էլ ավելի նշանակալի դարձնելու համար դպրոցում անհրաժեշտ է ձևավորել գիտակցության, մթնոլորտի և հարաբերությունների այնպիսի մակարդակ, որը թույլ կտա ոչ միայն ներգրավել, այլև պահպանել լավագույն մանկավարժներին՝ մշտապես ձեռնարկելով հնարավորը վերջիններիս կատարած դրական աշխատանքը խրախուսելու և կատարելագործելու ուղղությամբ:

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի նպատակն է՝

- • յուրաքանչյուր ուսուցչի համար դպրոցում ստեղծել հարմարավետ միջավայր,
- • տարածել առաջավոր մանկավարժական փորձը,
- • բարելավել մանկավարժական անձնակազմի որակը,
- • խրախուսել մանկավարժներին՝ հետազոտական աշխատանքներ կատարելու և սեփական գիտակրթական նյութերը ներկայացնելու համար՝ ապահովելով նրանց մանկավարժական աճը, իսկ առավել արժանիներին ներկայացնելով տարակարգի ստացման,
- • տաղանդավոր երեխաների հետ աշխատանքներում ապահովել մանկավարժների ակտիվ մասնակցությունը:

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի կատարելագործման նպատակով մեր կարծիքով անհրաժեշտ է՝

- • մանկավարժների համար դպրոցում ստեղծել տեղեկատվության մի համակարգ, որի միջոցով վերջիններս հնարավորություն կունենան մշտապես համալրելու իրենց գիտելիքները առնվազն հետևյալ ուղղություններով՝
  - • դպրոցի և կրթության նկատմամբ նոր պահանջներ,
  - • ժամանակակից մանկավարժական նվաճումներ,
  - • առաջավոր մանկավարժական փորձ,
  - • հոգեբանություն և մանկավարժություն:
- • փոխադարձ դասալսումների կազմակերպման միջոցով ուսուցիչների միջև պարբերաբար կազմակերպել փորձի փոխանակում՝ նպաստելով նրանց միջև համագործակցությանը,
- • արդյունավետ կազմակերպել և առավելագույնս օգտագործել կազմակերպված վերապատրաստումների և ատեստավորումների արդյունքները: Այս ուղղությամբ անհրաժեշտ է առհասարակ դպրոցում պարտադիր պայման և ավանդույթ դարձնել ցանկացած ուսուցչի կամ դպրոցի ղեկավարի կողմից վերապատրաստումների, դասընթացների, սեմինարների, հանդիպումների, կոնֆերանսների, ժողովների մասնակցության արդյունքում և/կամ ցանկացած այլ միջոցներով ստացված տեղեկատվության էական կամ ընդհանուր բաղադրիչների և սկզբունքների փոխանցումն ամբողջ մանկավարժական անձնակազմին՝ դպրոցում կազմակերպվող սեմինար քննարկումների միջոցով,
- • ուսուցիչների հետ աշխատանքում առավել շեշտադրել և ընդգծել վերջիններիս կողմից կիրառվող դասավանդման նոր ձևերն ու մեթոդները,
- • մշակել դպրոցում առկա խնդիրների՝ ուսուցիչների հետ համատեղ լուծմանն ուղղված մեխանիզմներ՝ նպատակ ունենալով ուսուցիչների մոտ ստեղծել բավարար վստահություն և անձնակազմի լիարժեք անդամ զգալու հնարավորություն,
- • հաճախակի կազմակերպվող քննարկումների միջոցով ուսուցիչների մոտ ձևավորել սեփական գործողությունները ինքնավերլուծելու և ինքնագնահատելու մշակույթ,
- • աջակցել ուսուցիչներին իրենց ինքնակրթության գործում,
- • ուսուցիչների կողմից համակարգչային գիտելիքներ ձեռքբերելու և/կամ կատարելագործելու նպատակով կազմակերպել ներդպրոցական և արտադպրոցական ուսումնական ծրագրեր,
- • կատարելագործել դպրոցի կադրային քաղաքականությունը (ինչի մասին անդրադարձել ենք նախորդ բաժիններում),
- • անընդհատ մոնիթորինգի ենթարկել դպրոցի տնօրենի տեղակալների կողմից դպրոցի մանկավարժների հետ տարվող անհատական աշխատանքների որակն ու սահմանված սկզբունքներին համապատասխանությունը,

- • մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել և գնահատել մանկավարժների գործունեությունը հետևյալ ասպարեզներում՝
  - • ուսուցչի գիտելիքների և մանկավարժական արհեստավարժության պահպանում և կատարելագործում,
  - • դպրոցական ընդհանուր ավանդույթների, մշակույթի և բարենպաստ մթնոլորտի ձևավորում և պահպանում,
  - • աշակերտների գիտելիքների, հմտությունների և կարողությունների կատարելագործում,
  - • կրթվելու և ինքնակրթվելու ցանկության առկայություն:
- • ամրապնդել ուսանող-դպրոց կապը (ինչի մասին անդրադարձել ենք նախորդ բաժիններում):

5. Աշակերտական ինքնավարության բարելավումը

Աշակերտական ինքնավարությունը 2011 թվականի մայիսի 17-ի ՀՀ կրության և գիտության նախարարի թիվ 571-Ն հրամանով հաստատված աշակերտական խորհրդի կանոնների համաձայն ենթադրում է՝

- • յուրաքանչյուր աշակերտի կողմից իր ուրույն տեղի ու դերի որոշում՝ հիմնվելով իր ընդունակությունների և հնարավորությունների վրա,
- • սովորողների ընդգրկում դպրոցի կառավարման գործընթացներում,
- • աշխատունակ կոլեկտիվի ստեղծում,
- • աշակերտների միջև ընկերական փոխհարաբերությունների ձևավորում,
- • յուրաքանչյուր աշակերտի կողմից սեփական կյանքի և գործունեության հնարավորինս ճիշտ կազմակերպում,
- • ինքնավարության համակարգի ՝որպես դպրոցի դաստիարակչական միջավայրի ստեղծում,
- • աշակերտին հասարակական հարաբերություններում ընդգրկելու համար խմբային և անհատական գործունեության կազմակերպում,
- • միջտարիքային շփման և սոցիալական հարմարվողականության հիմք հանդիսացող մանկական կազմակերպության զարգացում և ամրապնդում,
- • երեխաների իրավունքների և հետաքրքրությունների պաշտպանության համար անհրաժեշտ նախապայմանների ապահովում:

Աշակերտական ինքնավարության իմաստը կայանում է ոչ թե երեխայի կամ մի խումբ երեխաների կողմից մյուսների հանդեպ իշխանության չարաշահման մեջ, այլ երեխաների կողմից սեփական անձը, կյանքը, գործունեությունը, հարաբերությունները հասարակության մեջ կառավարելու ընդունակությունների ձեռքբերման մեջ:

Դպրոցում աշակերտական ինքնավարության համակարգի զարգացման համար անհրաժեշտ է՝

- • ստեղծել մանկավարժական, աշակերտական և ծնողական ինքնավարության օղակներ,
- • դպրոցում մշտապես վերահսկել աշակերտական ինքնավարության բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները,
- • դպրոցի ինքնավարության օղակների միջև կատարել լիազորությունների հստակ բաշխում և ապահովել վերջիններիս միջև սերտ համագործակցությունը,
- • այս ուղղությամբ ևս ապահովել սկզբունքների հրապարակայնություն և թափանցիկություն,

- • ստեղծել բավարար պայմաններ և հնարավորություն ընձեռել դպրոցի աշակերտների կողմից առողջ քննադատություն հնչեցնելու և կարծիքների ազատ փոխանակում իրականացնելու համար,
- • աշակերտներին ակտիվորեն ներգրավել՝
  - • դպրոցում կարգուկանոնի պահպանման գործընթացում,
  - • դպրոցական և ռազմահայրենասիրական միջոցառումների կազմակերպմանը,
  - • առարկայական շաբաթների կազմակերպմանը:
- • դպրոցում պարբերաբար կազմակերպել՝
  - • արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ (տոնական միջոցառումներ, ցերեկույթներ, համերգներ, էքսկուրսիաներ և այլն),
  - • դպրոցական հերթապահություններ,
  - • ճանաչված անձանց հետ հանդիպումներ,
- • դպրոցում մշտապես օգնություն, խնամք և աջակցություն տրամադրել կրտսեր ընկերներին,
- • այս ուղղությամբ պարբերաբար ծավալել դպրոցական լրատվական միջոցառումներ,
- • դպրոցի աշակերտական խորհուրդը դարձնել պատանի առաջնորդների հավաքակազմ:

Առաջարկվող միջոցառումների արդյունքում ակնկալվում է, որ դպրոցում՝

- • կհամախմբվի աշակերտական համակազմը,
- • կձևավորվեն և կպահպանվեն նոր ավանդույթներ,
- • աշակերտները ձեռք կբերեն կյանքի հմտություններ,
- • կբարձրանա միջոցառումներին մասնակցելու աշակերտների ցանկությունն ու պատրաստակամությունը,
- • անհատի ինքնաբացահայտման և ինքնակայացման համար կստեղծվեն անհրաժեշտ պայմաններ,
- • վերջնահաշվում՝ աշակերտի կյանքում կբարձրանա դպրոցի դերը:

6. Աշխատանք բացառիկ ընդունակություններով օժտված երեխաների հետ

Դպրոցը ուսումնադաստիարակչական մի օջախ է, որի գործունեությունն ուղղված է տարբեր ընդունակությունների տեր երեխաների հետ աշխատանքների իրագործմանը: Համապատասխանաբար ընդհանուր սկզբունքների և նպատակների ներքո դպրոցում պետք է ձևավորվեն նաև առանձնահատուկ մոտեցումներ տարբեր ընդունակությունների տեր երեխաների խմբերի համար: Այստեղ հարկ է առանձնացնել բացառիկ ընդունակություններով օժտված երեխաներին՝ հիմքում ունենալով վերջիններիս ստեղծագործական պոտենցիալը բարձրացնելու օբյեկտիվ անհրաժեշտությունը: Հենց այս խմբում ընդգրկված երեխաներն են էապես բարձրացնում դպրոցի հեղինակությունը հանրակրթության ոլորտում:

Բացառիկ ընդունակություններով երեխաների խմբին կարելի է դասել այն երեխաներին, որոնք՝

- • իրենց հասակակիցների համեմատությամբ օժտված են ավելի բարձր մտավոր կարողություններով, ընկալունակությամբ, ստեղծագործական հնարավորություններով,
- • հաճույքով են մտավոր աշխատանք կատարում,

Բացառիկ ընդունակություններով օժտված երեխաներին կարելի է պայմանականորեն բաժանել երեք խմբերի՝

- *• հավասար պայմաններում իրենց մտավոր զարգացման բարձր մակարդակով առանձնացող երեխաներ,*
- *• գիտության որևէ բնագավառին նախապատվություն տվող տաղանդավոր երեխաներ,*
- *• երեխաներ, որոնք թեև տարբեր պատճառներով ուսման մեջ էական հաջողությունների չեն հասել, սակայն օժտված են վառ ճանաչողական ակտիվությամբ:*

Դպրոցում անհրաժեշտ է մշտապես ապահովել՝

Բացառիկ ընդունակություններով օժտված երեխաների հետագա զարգացման համար բավարար նախապայմաններ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է՝

- *• ընտրել այնպիսի մեթոդներ և ուսման ձևեր, որոնք կնպաստեն երեխայի՝ համադրելու, համեմատելու, վերլուծելու, դասակարգելու և եզրակացնելու ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը,*
- *• հնարավորինս քիչ ժամանակ տրամադրել տեղեկատվությանը և, ընդհակառակը, ժամանակի մեծ մասն ուղղել քննարկումներին՝ օգտագործելով «բաց հարցեր», որոնք չեն ենթադրում «այո» կամ «ոչ» պատասխաններ,*
- *• մշտապես կատարելագործել ղեկավար-ենթակա արդյունավետ համագործակցությունը,*
- *• ցուցաբերել հարգանք երեխայի անհատական հնարավորությունների և հետաքրքրությունների նկատմամբ,*
- *• ընտրել ուսուցման այնպիսի ձևեր և մեթոդներ, որոնք կապակցված կլինեն ավանդական մեթոդների հետ և միևնույն ժամանակ կպարունակեն առանձնահատուկ տարրեր: Օրինակ՝ կարելի է կիրառել «մտագրոհ», դերային վարժություններ, թրեյնինգներ, խմբային աշխատանքներ, ստեղծագործական հանձնարարություններ,*
- *• միասնական ուսուցմամբ նպաստել հասարակության մեջ երեխաների հետագա սոցիալական հարմարվողականությանը,*
- *• մշտապես մոնիթորինգի ենթարկել և հսկողության տակ պահել դպրոցի վարած դաստիարակչական քաղաքականությունը:*

Բացառիկ ընդունակություններով օժտված երեխաների հետագա զարգացման, մասնագիտական ճիշտ կողմնորոշման գործընթացում անհրաժեշտ է համագործակցել ավագ դպրոցների հետ, ինչի արդյունքում հնարավորինս հստակ կուրվագծվի երեխայի ապագան:

7. Աշակերտների առողջության պահպանում

Աշակերտների առողջության պահպանման նպատակով մեր կողմից առաջ քաշված խնդիրները նպատակ ունեն՝

- • դպրոցում ապահովել սանիտարահիգենիկ անհրաժեշտ պայմաններ (հակահրդեհային, անվտանգ սննդի, լուսային, ջերմային),
- • սովորողների մոտ ձևավորել առողջ ապրելակերպի մշակույթ,
- • պայքարել ծխելու վտանգավոր սովորույթի դեմ:

Աշակերտների առողջության պատշաճ պահպանումն ապահովելու ուղղությամբ նախատեսվում է՝

- • հնարավորինս բացառել անորակ սննդի մուտքը դպրոց,
- • կրթության և դաստիարակության գործընթացում համագործակցել դպրոցի բժշկի, հոգեբանի և ֆիզկուլտուրայի ուսուցիչների հետ,
- • հանձնարարել դաստիարակչական գծով տնօրենի տեղակալներին և դասղեկներին, որպեսզի աշակերտների ֆիզիկական և առողջական վիճակի ուսումնասիրության նպատակով սերտորեն համագործակցեն դպրոցի բժշկի հետ,
- • մանկական հիվանդությունների կանխարգելման նպատակով համագործակցել արտադպրոցական բժշկական հաստատությունների հետ,
- • ՆԶՊ ուսուցչի, կազմակերպիչների և դասղեկների հետ հաճախակի կազմակերպել կանխարգելիչ միջոցառումներ՝ ուղղված դժբախտ պատահարներից պաշտպանվելու երեխաների կարողությունների ստեղծմանը,
- • առարկայական ուսուցիչների և դասղեկների հետ պարբերաբար անցկացնել քննարկումներ դասարանական և տնային աշխատանքներին հատկացված ժամաքանակի վերաբերյալ,
- • միջոցառումների, զեկույցների, քննարկումների միջոցով պարբերաբար անդրադառնալ դարին բնորոշ խնդրահարույց հիվանդություններին (ՁԻԱՀ, ալկոհոլիզմ, թմրամոլություն, սեռավարակներ) և դրանց վտանգավորությանը,
- • մշտապես հատուկ ուշադրության կենտրոնում պահել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մարմնակրթության և ֆիզիկական դաստիարակության խնդիրները,
- • հարստացնել դպրոցի սպորտային բազան: